ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՉՈՐՍ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Եթե պետությունը վավերացրել է Ստամբուլի կոնվենցիան, ապա այն պարտավոր կլինի ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

Խրախուսել զանգվածային լրատվամիջոցներին և մասնավոր հատվածին՝
սահմանելու այնպիսի չափանիշներ, որոնք կամրապնդեն հարգալից գենդերային դերակատարումները և կվիճարկեն կանանց նկատմամբ բռնությունն արդարացնող դիրքորոշումները:

Իրազեկության բարձրացման քարոզարշավները:
Բարձրացնել իրազեկությունը բռնության տարբեր ձևերի, դրանց կործանարար բնույթի և կանանց և երեխաների վրա դրանց ունեցած ազդեցության մասին:

Բռնության բացառման թեմայով և կանանց և տղամարդկանց միջև հավասարության թեմայով կրթությունը:
Կրթության բոլոր մակարդակներում ֆորմալ ուսուցման ծրագրերում ներառել դասավանդման նյութեր, որոնք նվիրված կլինեն գենդերային հավասարությանը, գենդերով պայմանավորված բռնությանը, վեճերը ոչ բռնի եղանակներով լուծելուն և անձի անձեռնմխելիության իրավունքին:

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Վիճարկել գենդերային կարծրատիպերը:
Խթանել կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային օրինաչափությունների փոփոխությունները:

Աջակցել կանանց իրավազորմանը:
Կանանց իրավազորմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ ներդնել, և խոցելի վիճակներում հայտնված անձանց առանձնահատուկ կարիքներն հոգալ մարդու իրավունքների տեսակետից:

Ծրագրեր բռնություն գործադրած անձանց համար:
Ստեղծել ծրագրեր, որոնց շրջանակում ընտանեկան բռնություն կատարած անձանց կուսուցանվի ոչ բռնի վարքագիծ, իսկ սեռական բռնություն կատարած անձանց՝ թե ինչպես խուսափել կրկին անգամ հանցանք գործելուց:

Տղամարդկանց և տղաների դերը:
Խրախուսել տղամարդկանց և տղաների ակտիվ ներգրավումը և մասնակցությունը բռնության կանխարգելմանը:

Մասնագետների վերապատրաստումը:
Վերապատրաստել տուժողների կամ բռնություն գործադրած անձանց հետ աշխատող մասնագետներին, որպեսզի նրանք կարողանան ճանաչել բռնությունը և հակազդել դրան, ինչպես նաև՝ կատարել պատշաճ ուղղորդումներ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետության կողմից իրագործվող բոլոր պաշտպանական միջոցառումների հիմքում պետք է դրված լինեն տուժողների և վկաների անվտանգությունը և կարիքները: Նրանց իրավունքները ներառում են.

Իրավունքների մասին տեղեկատվությունը:

Տուժողները պետք է տեղեկացվեն իրենց իրավունքների մասին և իմանան, թե որտեղ և ինչպես կարող են իրենց հասկանալի լեզվով օգնություն ստանալ:

Աջակցման ծառայություններ:

Տուժողները պետք է կարողանան ստանալ կանանց աջակցման մասնագիտացված ծառայություններ, որոնք հաճախ կանանց կողմից են մատուցվում այլ կանանց: Այդ ծառայությունները պետք է մասնագիտացված լինեն՝ ըստ բռնության կոնկրետ ձևերի: Տուժողները պետք է կարողանան ստանալ նաև ընդհանուր բնույթի ծառայություններ, մասնավորապես՝ իրավաբանական խորհրդատվություն/օգնություն, հոգեբանական խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն, կացարանի, կրթության, առողջապահության և սոցիալական ծառայություններ, ինչպես նաև աջակցություն աշխատանք գտնելու հարցում:

Բողոքարկման տարածաշրջանային և միջազգային մեխանիզմները:

Տուժողները պետք է տեղեկացվեն բողոքարկման տարածաշրջանային և միջազգային վերաբերելի մեխանիզմների մասին և կարողանան օգտվել դրանցից:

Ապաստարանները:

Պետք է գործի տուժողների համար հասանելի և մատչելի, կանանց և երեխաների համար նախատեսված տեղական ապաստարան

Բռնաբարության հարցերով ճգնաժամային կենտրոնները կամ սեռական բռնության հարցերով զբաղվող կենտրոնները:

Տուժողների համար հասանելի, մոտակայքում գտնվող և դյուրամատչելի կենտրոն պետք է գործի, որտեղ պետք է մատուցվեն հրատապ բժշկական խորհրդատվության, տրավմայի պարագայում ցուցաբերվող օգնության և դատական բժշկության ծառայություններ:

Բռնության մասին իրավասու մարմիններին հաղորդում ներկայացնելը:

Բոլորին պետք է քաջալերել, որպեսզի բռնության արարքների մասին հաղորդումներ ներկայացնեն իրավասու մարմիններին՝ այդ կերպ կանխելով նորանոր միջադեպերը, ընդ որում՝ գաղտնիության կանոնները չպետք է մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձանց արգելեն բռնության մասին հաղորդում ներկայացնել այն դեպքում, երբ նման հաղորդում ներկայացնելն արդարացված է:

Անհետաձգելի արգելափակող կարգադրությունները:

Նման կարգադրություններն ոստիկանությանն իրավունք են վերապահում ընտանեկան բռնություն գործադրած անձին որոշակի ժամկետով հեռացնել իր տնից և կարգադրել, որպեսզի նա հեռու մնա տուժողից:

Պաշտպանող կամ արգելող կարգադրությունները:

Նման կարգադրությունները պետք է հեշտությամբ հասանելի լինեն, որպեսզի հնարավոր լինի առանց որևէ ծախսեր կրելու անհապաղ պաշտպանել տուժողին:

Երեխաների անվտանգ խնամակալությունը և տեսակցության իրավունքները:

Եթե անցյալում եղել են բռնության դեպքեր, ապա խնամակալության և տեսակցության մասին որոշումներ կայացնելիս պետք է առաջնահերթ դիտարկել երեխայի և տուժողի իրավունքները և անվտանգությունը:

Հեռախոսային անվճար թեժ գծեր՝ 24/7 ռեժիմով:

Տուժողներին պետք է պետության ողջ տարածքում հասանելի լինի 24/7 ռեժիմով գործող անվճար և գաղտնի հեռախոսային թեժ գիծը, որը նրանց մասնագիտական խորհուրդներ կտա և կուղղորդի անհրաժեշտ ծառայությունների ուղղությամբ:

Անչափահաս վկաների իրավունքները և կարիքները:

Պետք է հաշվի առնել բռնության անչափահաս վկաների լավագույն շահերը և կազմակերպել տարիքին հարիր հոգեբանասոցիալական խորհրդատվություն:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Եթե պետությունը վավերացրել է Ստամբուլի կոնվենցիան, ապա այն պարտավոր է ապահովել հետևյալը.

(իրավակիրառ և իրավապահ գործունեությունը, դատական վարույթները)

Տարհամոզիչ պատժամիջոցները բռնություն գործադրած անձանց համար:

Ապահովել, որպեսզի քրեական հանցագործությունների և պաշտպանող կարգադրությունների խախտումների դեպքում քրեական կամ իրավական համաչափ պատժամիջոցներ կիրառվեն, ներառյալ՝ ազատազրկում, հանձնում այլ պետության (էքստրադիցիա), մոնիթորինգ և վերահսկողություն, ծնողական իրավունքներից զրկում:

Արդյունավետ քրեական հետապնդումը պետության կողմից:

Կանանց նկատմամբ կատարված բռնի հանցագործությունների քննության կամ քրեական հետապնդման շրջանակում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ կանայք անհամաչափորեն ավելի ծանր են տուժում բռնությունից: Քննության կամ քրեական հետապնդման համար չպետք է պարտադիր լինի տուժողի կողմից հաղորդում կամ բողոք ներկայացնելը, և դրանք կարող են շարունակվել անգամ այն դեպքում, երբ տուժողը հետ է վերցնում իր հայտարարությունը կամ բողոքը:

Ծանրացնող հանգամանքներն հաշվի առնելը:

Ապահովել, որպեսզի հաշվի առնվեն ծանրացնող հանգամանքները, այդ թվում՝ տուժողի հետ մերձավոր կամ ինտիմ կապ ունենալը, խոցելի անձի դեմ կամ երեխայի ներկայությամբ հանցանք գործելը, հանցակցությունն այլ անձանց հետ, բռնության կամ հոգեբանական վնասի ծայրահեղ բարձր մակարդակը կամ համանման հանցագործությունների համար նախկին դատվածությունները:

Կանանց նկատմամբ բռնությունը քրեականացնող օրենսդրությունը:

Ընդունել օրենքներ, որոնք կքրեականացնեն ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունը, սեռական ոտնձգությունները, հետամտումը, կանացի սեռական օրգանների խեղումը, հարկադիր ամուսնությունը, հղիության հարկադիր արհեստական ընդհատումը և հարկադիր ամլացումը: Կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի մշակույթը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չհամարվեն բռնության արդարացումներ:

Արդյունավետ քննությունը ոստիկանության կողմից:

Իրավապահ մարմինները պետք է անմիջապես արձագանքեն օգնության կանչերին, հավուր պատշաճի կառավարեն վտանգավոր իրավիճակները և քննեն կանանց նկատմամբ բռնության մասին ստացվող բոլոր տեղեկությունները և բողոքները:

(Տուժողների իրավունքները)

Անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությունը

- Երեխաների համար պետք է իրագործվեն հատուկ պաշտպանության պատշաճ միջոցառումներ:
- Սեռական բռնությունից, հարկադիր ամուսնությունից, կանացի սեռական օրգանների խեղումից, հղիության հարկադիր արհեստական ընդհատումից և հարկադիր ամլացումից տուժող անչափահասները պետք է կարողանան իրավական վարույթ հարուցել՝ չափահաս դառնալուց հետո բավականաչափ երկար ժամանակի ընթացքում:

Ռիսկերի համակարգված գնահատումները:

Նման գնահատումներն իրականացվելու են՝ համագործակցելով համապատասխան գերատեսչությունների և կառույցների հետ, հաշվի առնելով կրկնահանցագործությունները և հրազեն ունենալու հնարավորությունը, ինչպես նաև՝ քննությամբ ի հայտ բերվող ցանկացած նոր տեղեկություններ:

Տուժողին երբևէ չմեղադրելը:

Քննության և դատական վարույթների բոլոր փուլերում պետք է հարգել տուժողներին և ձեռնպահ մնալ այնպիսի դիրքորոշումներ, պահվածք կամ վարքագիծ դրսևորելուց, որը կմեղադրի տուժողներին և լրացուցիչ տառապանք կպատճառի վերջիններիս:

Տուժողների անձնական կյանքի գաղտնիության իրավունքը

- Ապահովել տուժողի անձնական կյանքի գաղտնիության և հեղինակության պաշտպանվածությունը, և հնարավորինս խուսափել տուժողի և ենթադրյալ բռնարարի միջև շփումներից:
- Տուժողին հնարավորություն ընձեռել, որպեսզի նա անմիջականորեն կամ միջնորդի միջոցով կարողանա ներկայացնել ապացույցներ, ինչպես նաև՝ իր կարիքները և մտահոգությունները:
- Տուժողին հնարավորություն ընձեռել, որպեսզի նա դատական նիստերի դահլիճում ցուցմունք տա կապի տեխնոլոգիաների միջոցով, կամ՝ առնվազն առանց ենթադրյալ բռնարարի ներկայության:
- Քաղաքացիական կամ քրեական վարույթի շրջանակում տուժողի սեռական անցյալը ներկայացնելը կարող է թույլատրելի լինել միայն այն դեպքում, երբ այդ հանգամանքներն էական են և անհրաժեշտ:

Տուժողի տեղեկատվության և աջակցության իրավունքը

- Տեղեկացված լինել իր գործի առաջընթացի և արդյունքների մասին
- Տեղեկություններ ստանալ տուժողի իրավունքների, ինչպես նաև՝ աջակցման այն ծառայությունների մասին, որոնց օգնությամբ տուժողը կարող է ներկայացնել իր իրավունքները և շահերը
- Քննության և դատական վարույթի ընթացքում աջակցություն և օժանդակություն կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններից և ընտանեկան բռնության հարցերով խորհրդատուներից
- Իրավաբանական աջակցություն և անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը
- Անհրաժեշտության դեպքում՝ անկախ և բանիմաց թարգմանիչների տրամադրումը
- Օրենքի օգնությամբ փոխհատուցում պահանջել բռնություն կատարած անձից և դատի տալ պետական մարմիններին, եթե վերջիններս բավարար չափով չեն կատարել կանխարգելելու և պաշտպանելու իրենց պարտականությունները

Տուժողի պաշտպանությունը քննության և դատական վարույթի ընթացքում

- Բռնությունից տուժող անձինք և նրանց ընտանիքի անդամները պետք է քննության և դատական վարույթի բոլոր փուլերում պաշտպանված լինեն ահաբեկումից, վրեժխնդրությունից և կրկնազոհայնացումից
- Վեճերի լուծման այլընտրանքային տարբերակները, օրինակ՝ հաշտարարությունը տուժողի և բռնություն գործադրած անձի միջև, չպետք է պարտադիր լինեն
- Տուժողը պետք է տեղեկացվի բռնություն գործադրած անձի փախուստ կատարելու կամ ազատ արձակվելու մասին

Քաղաքականությունների համակարգում

Եթե պետությունը վավերացրել է Ստամբուլի կոնվենցիան, ապա այն պարտավոր կլինի ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

Միջգերատեսչական համագործակցություն:
Ապահովել դատական համակարգի, դատախազների, իրավապահ մարմինների, տեղական և տարածքային իշխանությունների և ՀԿ-ների միջև արդյունավետ համագործակցություն ապահովող պատշաճ մեխանիզմների գոյությունը

Աջակցություն և աշխատանք քաղաքացիական հասարակության և ՀԿ-ների հետ:
Նրանք պետք է պետական մարմինների հետ միասին ներառվեն Ստամբուլի կոնվենցիայի իրագործման ուղղությամբ կատարվող աշխատանքներում՝ որպես արժեքավոր գործընկերներ

Համակարգել աշխատանքները և մշտադիտարկել իրականացման ընթացքը:
Ստեղծել կամ նախատեսել պետական մարմին, որը կվերահսկի Ստամբուլի կոնվենցիայի համակարգումը, իրականացումը, մշտադիտարկումը և գնահատումը:

Մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականություններ:
Ներդնել տուժողակենտրոն օրենքներ, որոնք թույլ կտան կանխել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը և պայքարել դրանց դեմ:

Համահասարակական արձագանք:
Ստամբուլի կոնվենցիան հստակ ուղերձ է հղում ողջ հասարակությանը: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հասկանալ, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը չեն հանդուրժվելու:

Ֆինանսավորում քաղաքականությունների և ծառայությունների համար:
Բավարար չափով ֆինանսավորել Ստամբուլի կոնվենցիայի իրագործմանը մասնակցող բոլոր գործընկերներին, այդ թվում՝ ոչ կառավարական կազմակերպություններին:

Համապարփակ օրենսդրություն և գենդերազգայուն քաղաքականություններ:
Ներդնել օրենքներ և աջակցող միջոցառումներ, որոնք թույլ կտան կանխել սույն Կոնվենցիայով նախատեսված բռնության բոլոր ձևերը:

Հետազոտություններ և տվյալների հավաքագրում:
Տվյալներ հավաքել և դասակարգել, հետազոտել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի տարածվածությունը և իրականացվող միջոցառումների արդյունավետությունը: Արդյունքները ներկայացնել հանրությանը և այլ պետությունների համանման կառույցներին՝ համեմատության համար, ինչպես նաև համագործակցությունը խրախուսելու նպատակով:

www.coe.int/conventionviolence

PREMS 108920

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, ներառյալ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE